ՀԱՆԴԻՊՈՒՄ ԽՄԲԱԳՐԻ ՀԵՏ

«ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՅԱՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑ»

Փետրվարի 5-ին, Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցում կայացավ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի հանդիպումը դպրոցի 9-րդ, 10-րդ ու 11-րդ դասարանների աշակերտների եւ նրանց ուսուցիչների հետ:

Գիտելիքների պակասը լրացնելու նպատակով, կյանքի մշտական ուղեկից դարձած ինքնակրթությամբ, դպրոցում ստացածը լրացնելու, բազմապատկելու, գրադարաններից օգտվելու եւ ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ ավելի շատ, խոր եւ կայուն գիտելիքների ձեռքբերումն ու տարբեր բնագավառներում դրանց օգտագործումն է. սա էր միջոցառման հիմնական նպատակը:

Դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի խնդրանքով, Վան Բայբուրթյանը իր կյանքի ու գործունեության մասին պատմեց՝ դպրոցականներին հավաստիացնելով, որ կարելի է դրան հասնել միայն համառ աշխատասիրության ու մեծ ցանկության դեպքում:

Թերթի խմբագիրը հավաքվածներին պատմեց, թե ինչպես կարելի է հասնել գործնական բարձունքների: Ապա բերեց իր օրինակը՝ սովորելով դեռ մայրաքաղաքի թիվ 40 հայկական դպրոցում, ապա, ավարտելով Թբիլիսիի պետական համալսարանը, Թբիլիսիում եւ Երեւանում՝ որպես սեփական թղթակից, աշխատել մոսկովյան «Սովետսկի սպորտ», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերում, մոսկովյան «Նորությունների մամուլի գործակալությունում»: Ապա իրեն առաջարկել են ղեկավարել «Վրաստան» թերթը: Եղել է Վրաստանի խորհրդարանի մի քանի գումարումների պատգամավոր, Վրաստանի նախագահի խորհրդական:

Խմբագիրը պատասխանեց նաեւ աշակերտներին ու ուսուցիչներին հետաքրքրող հարցերին:

Վերջում դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը իր եւ աշակերտների անունից շնորհակալություն հայտնեց թերթի խմբագրին հետաքրքիր զրույցի ու խորհուրդների համար, կոչ արեց, որ աշակերտներն օրինակ վերցնեն Վան Բայբությանից՝ հասարակ ընտանիքի զավակը իր աշխատասիրության շնորհիվ եւ խոր ու կայուն գիտելիքներով հասել է բարձունքների:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԲՈՒՀ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ համագործակցությամբ, Ամերիկայի միջազգային զարգացման գործակալությունը (USAID) Վրաստանում սկսում է 7 միլիոն դոլար արժեք ունեցող կրթական նախագիծ:

Վրաստանի կրթության նախարարության լրատվությամբ, նախագիծը նպատակ ունի օժանդակել ընդհանուր եւ բարձրագույն կրթության զարգացմանը: Նախագիծը կաջակցի «Նոր դպրոցական մոդելի» բարեփոխման իրականացմանը, որն առավելություն է տալիս դպրոցներում աշակերտների վրա կողմնորոշված դասավանդման մեթոդներին: Ինչպես նախարարության «Նոր դպրոցի մոդելի» բարեփոխումը, USAID-ը կոչված է զարգացնել աշակերտների կողմից խնդիրների լուծման եւ քննադատական մտածողության հմտությունները:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ՝ ԱՌԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Արտասահմանում սովորող վրաստանցի շուրջ 350 ուսանողներ բարձրացրել են Վրաստանի համալսարաններ առանց քննությունների տեղափոխվելու պահանջ:

Վրաստանի կրթության նախարարության մոտ հավաքված ուսանողները հայտարարեցին, որ 2019 թվականին իրենք ընդունվել են Կիեւի, Երեւանի եւ մի շարք այլ քաղաքների համալսարաններ եւ ներկայումս ցանկանում են ուսումը շարունակել Վրաստանի բուհերում: Ընդ որում, այդ տեղափոխումը պետք է լինի առանց քննության: Նշենք, որ Վրաստանի կանոնադրությամբ, նման տեղափոխումը նախատեսում է ազգային քննության հանձնում, ինչը, ուսանողների կարծիքով, նախարարության կողմից արհեստական արգելք է հանդիսանում:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՐԱԽԱՑԱՆ «ՍԱՄԱՐԱՑԻՆԵՐԻ ՔՍԱԿ» ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՎԵՐՆԵՐՈՎ

Փետրվարի 4-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի, Կարմիր եւ Աղքյորփի գյուղերի հոգեւոր հովիվ Զավեն վարդապետ Յազիչյանի ուղեկցությամբ, թեմի վարչատնտեսական բաժնի տնօրեն Կարեն Երիցյանի ուղեկցությամբ, այցելեց շրջանի Շահումյան ավան եւ Կարմիր գյուղ:

Կիրակոս վարդապետը եղավ Շահումյանի Սուրբ Աստվածածին եկեղեցում, այցելեց Կարմիր գյուղի Սրբոց Ավետարանչաց մատուռ, զրուցեց տեղի բնակչության հետ՝ նրանց հոգեւոր կյանքի, կատարվող ծիսական արարողությունների, եկեղեցու շուրջ համախմբման, բնակչության ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ անցկացվող միջոցառումների մասին:

Հայր Սուրբը այցելեց նաեւ Շահումյանի թիվ թիվ 1, 2 եւ 3, Կարմիր գյուղի հանրային դպրոցներ, տեղի մանկապարտեզ: Վերոնշյալ հաստատություններում, հոգեշնորհ Կիրակոս վարդապետը դպրոցականներին բաշխեց իր հայրական օրհնությունը եւ բաժանեց «Սամարացիների քսակ» քրիստոնեական բարեգործական կազմակերպության նվերները, որոնք հեռավոր արտասահմանից իրենց հասակակիցներին ուղարկել էին որպես սիրո եւ բարության արտահայտում: Հայր Սուրբը երեխաներին հորդորեց լինել բարի, ապրել քրիստոնեական սիրով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՆ ԵՐՐՈՐԴՆ Է

«Եվրոպական լավագույն ճանապարհորդական ուղղություն 2020» (EBD) միջազգային մրցույթում ներկայացվել են ութ լուսանկարիչների նկարներ, որոնք լուսանկարել են Թբիլիսիի տարբեր թաղամասերը:

«Եվրոպայում ճանապարհորդելու լավագույն տեղերը 2020 թվականին» հարցումն անցկացվում է արդեն 11 տարի «Եվրոպայի լավագույն վայրերը» ինտերնետային պորտալի կողմից: Այս տարի քվեարկությանը մասնակցել է ավելի քան 600 000 մարդ:

Վարկանիշում Վրաստանի մասին նշվում է, որ «Թբիլիսի մայրաքաղաքը իդեալական վայր է ճարտարապետական, մշակութային եւ գաստրոնոմիական բազմազանության սիրահարների համար»:

Բացի այդ, ինտերնետային պորտալն ուշադրություն է դարձնում Թբիլիսիի ճարտարապետությանը:

«Միջնադարյան շենքերը միաձուլվում են օսմանյան հիանալի շինությունների հետ: Այստեղ դուք կգտնեք նեոկլասիկ, սովետական կամ ժամանակակից շենքեր: Թբիլիսին հարգում է անցյալը եւ կենտրոնանում է ապագայի, իր երիտասարդության եւ վաղվա խնդիրների վրա: Անպայման բարձրացեք Թբիլիսիի բարձունք եւ այցելեք Թբիլիսիի պահակախումբ՝ «Քարթլիս-Դեդա» արձանը (Մայր Քարթլի), որտեղից բացվում է մայրաքաղաքի համայնապատկերը: Խաղաղության կամուրջ, Մետեխիի տաճար, ջերմային լոգարաններ, նոր թատրոն եւ Մթածմինդայի պուրակ», - ասվում է Թբիլիսիի նկարագրության մեջ:

Համացանցային պորտալը նաեւ առաջարկում է Վրաստան ճանապարհորդողներին ճանապարհորդելու լավագույն ժամանակը:

«Վրաստանի մայրաքաղաքն իդեալական է գարնանը եւ ամռանը, երբ բնությունն արթնանում է: Իսկ ձմռանն այն զարդարվում է հազարավոր լամպերով, Սուրբ Ծննդյան զարդերով ու տոնավաճառներով»:

2020 թվականի Եվրոպայի լավագույն ուղղությունների մրցույթում, Վրաստանի մայրաքաղաքի մրցակիցներն էին Լոնդոնը, Վիեննան, Աթենքը, Ամստերդամը, Պրահան եւ այլն:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿ

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության զբոսաշրջության ազգային գործակալությունը հրապարակեց ներքին գործերի նախարարության կողմից հունվար ամսին զբոսաշրջիկների Վրաստան կատարած այցելությունների վիճակագրությունը:

Ըստ վիճակագրության՝ 2020 թվականի հունվարին Վրաստան է այցելել 633 201 միջազգային ճանապարհորդ, ինչը 19,8 տոկոսով ավելի է նախորդ տարվա հունվարի ցուցանիշից:

Գերատեսչության տվյալներով, այստեղից միջազգային այցելուների թիվը 523 689 է, ինչը 86 471, կամ 19,8 տոկոսով մեծ է, քան 2019 թվականի հունվարի ցուցանիշը: Զբոսաշրջային այցելությունների քանակը կազմել է 363 614, ինչը 57 675-ով ավելի է, քան 2019 թվականի հունվարի ցուցանիշը՝ 18,9 տոկոս աճով:

Ինչպես ասված է զբոսաշրջության ազգային վարչության լրատվության մեջ, Ռուսաստանի կողմից ավիահաղորդակցությունը սահմանափակելուց հետո, Վրաստանի կառավարությունը մեծ աշխատանք է կատարել հնարավոր բացասական հետեւանքները նվազագույնի հասցնելու համար:

Զբոսաշրջության ազգային գործակալության տվյալներով, 2020 թվականի հունվարին, Վրաստան ամենաշատ միջազգային այցելու է եկել Ադրբեջանից՝ 124 534 այցելու, ինչը 34,9 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Երկրորդ տեղում Հայաստանն է, որտեղից հունվար ամսին ժամանել է 91 580 մարդ, ինչը 17,5 տոկոսով ավելի է 2019 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Երրորդ տեղը զբաղեցնում է Ռուսաստանը, որտեղից 2020 թվականի հունվար ամսին կատարվել է 86 884 միջազգային այց (1,1 տոկոս աճ), իսկ չորրորդ տեղում Թուրքիան է՝ 75 012 միջազգային այցով (աճը 16,6 տոկոս):

Բացի այդ, զբոսաշրջության ազգային գործակալության լրատվությամբ, դրական միտում է պահպանվում նաեւ Եվրամիության երկրներից: Հունվարին միջազգային այցերով աչքի են ընկել՝ Իտալիան 133,1 տոկոս աճ, Լեհաստան՝ 82,9 տոկոս աճ, Ֆրանսիա՝ 46,8 տոկոս աճ, Լիտվա՝ 43,7 տոկոս աճ:

Միեւնույն ժամանակ, 2020 թվականի հունվարին առանձնահատուկ աճ է գրանցվել Իսրայելից՝ 57,3 տոկոս, Սաուդյան Արաբիայից՝ 49,8 տոկոս, Ղազախստանից՝ 44,8 տոկոս, Քուվեյթից՝ 44,6 տոկոս եւ այլ երկրներից:

Ըստ նախնական տվյալների՝ 2019 թվականին Վրաստան կատարած միջազգային այցերից ստացված եկամուտը կազմել է՝ 3,3 միլիարդ դոլար, ինչը 47 միլիոնով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: 2019 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ միջազգային այցերից ստացված եկամուտը կազմել է 217 միլիոն դոլար, ինչը 11 միլիոնով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ Է ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՆՈՒՄ Է ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԳԾՈՎ»

(Սկիզբը՝ 14-րդ էջում)

ՁԵՐՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Զարեհ Սինանյանն այցելեց Թբիլիսիի հայկական կրթօջախներ:

Թիվ 104 հանրային դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը հանձնակատարին ներկայացրեց դպրոցի գործունեությունն ու առօրյան: Աշակերտները հյուրերին ողջունեցին գեղեցիկ ներկայացմամբ եւ ազգային երգ ու պարով:

Թիվ 104 դպրոցում

Հանձնակատարի հաջորդ այցը 103 վրաց-հայկական դպրոց էր: Դպրոցի տնօրեն Արչիլ Չխեիձեի եւ փոխտնօրեն, հայկական բաժնի ղեկավար Հասմիկ Պապիկյանի ուղեկցությամբ, Զարեհ Սինանյանը շրջայց կատարեց դպրոցում, զրուցեց աշակերտների հետ:

Թիվ 103 դպրոցում

Մայրաքաղաքի երկու հայկական կրթօջախներում Զարեհ Սինանյանը հանդիպում ունեցավ ուսուցչական կազմի հետ, քննարկվեցին առկա կրթական խնդիրները, կարեւորվեցին ուսուցիչների վերապատրաստման, աշակերտների մասնակցությամբ Հայաստան պարբերաբար այցելությունների հնարավորությունները:

Զարեհ Սինանյանը եղավ Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, ծանոթացավ կենտրոնի գործունեությանը, այցելեց Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Սուրբ Էջմիածին հայկական եկեղեցիներ: Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը պատմեց Սուրբ Էջմիածին եկեղեցում իրականացված հիմնանորոգությունների եւ հոգեւոր-մշակութային գործունեության մասին: Ապա հանձնակատարը շրջայց կատարեց «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնում: Կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը հյուրերին ներկայացրեց այստեղ գործող նախակրթարանը, մայրենիի ուսուցման մեկօրյա վարժարանները, երգի, պարի, վոկալի, դհոլի, դուդուկի, շախմատի խմբակները:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը այցելեց նաեւ Գարրի Դավթյանի Խամաճիկների տուն, որտեղ Ժաննա Դավթյանը հյուրին ներկայացրեց տիկնիկների ավանդական պարը: Հյուրը գրառում կատարեց տպավորությունների մատյանում:

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

Փետրվարի 4-5-ը աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը եղավ Ախալցիխեում, Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում, որտեղ հանդիպեց Սամցխե-Ջավախեթիի երկրամասային ղեկավարության, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

Ախալցիխեի տարածաշրջանային վարչությունում կայացավ հանդիպում Զարեհ Սինանյանի եւ Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու միջեւ:

Հանդիպմանը, որին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Ախալցիխեի քաղաքապետ Զազա Մելիքիձեն, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Գիորգի Կոպաձեն, երկրամասի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին ընդգծեց հարեւան երկրների դարավոր հարաբերությունների կարեւորությունը՝ շեշտելով, որ Հայաստանի սփյուռքի հարցերի հանձնակատարի այցն է՛լ ավելի կնպաստի բարեկամական հարաբերությունների խորացմանը:

Իր հերթին, Զարեհ Սինանյանը նշեց, որ նման այցերը կարեւոր են ոչ միայն հայ համայնքների հետ հանդիպումների եւ խնդիրների բարձրաձայնման առումով, այլեւ՝ նմանօրինակ հանդիպումների ու ծանոթությունների տեսանկյունից: Ընդգծվեց այն հանգամանքը, որ հայ եւ վրացի ժողովուրդները կողք-կողքի բնակվում են համերաշխության ու եղբայրության սկզբունքներով՝ նպաստելով նաեւ երկու երկրների միջպետական հարաբերությունների զարգացմանը: Երկրամասի ղեկավարները ներկայացրին Ջավախեթիում իրականացվող բարեփոխումները՝ սկսած կրթական մակարդակի բարձրացումից մինչեւ ճանապարհների կառուցում ու ենթակառուցվածքների արդիականացում:

«ԱրՄաթ» լաբորատորիայում

Անդրադարձ կատարվեց տեղի հայության առօրյային, զարգացման ծրագրերին եւ այլ թեմաներին: Պատրաստակամություն հնչեց համագործակցել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով:

Սամցխե-Ջավախեթիի նահանգապետարանում

Ախալցիխեում Զարեհ Սինանյանն այցելեց տեղի թիվ 3 հայկական դպրոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, եղավ Ծուղրութ հայաբնակ գյուղում, հանդիպում ունեցավ Ախալցիխեի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Փետրվարի 5-ին Զարեհ Սինանյանը ուղեւորվեց Ախալքալաքի եւ Նինոծմինդա: Նա եղավ Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի քաղաքապետարաններում, որտեղ հանդիպում ունեցավ մունիցիպալիտետների քաղաքապետարանների ու սակրեբուլոների ղեկավարների, տեղի համայնքի ներկայացուցիչների հետ: Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի քաղաքապետեր Յուրի Ունանյանի եւ Անիվարդ Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանի ուղեկցությամբ՝ Զարեհ Սինանյանը այցելեց նաեւ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդություն, Ախալքալաքիի «ԱրՄաթ» ինժեներական լաբորատորիայում ծանոթացավ կենտրոնի սանեորի աշխատանքներին:

Նշենք, որ երկրամասի բնակիչների հետ կայացած հարցուպատասխանի ձեւաչափով անցկացված հանդիպումներում տեղացիների կողմից բարձրացվեցին բազում հարցեր, որոնք հիմնականում վերաբերում էին կրթական, սոցիալ-տնտեսական, իրավական ոլորտներին: Հատկապես կարեւորվեց սփյուռքահայ ուսանողների համար հայաստանյան համալսարաններում հայագիտական ուղղություններով անվճար տեղերի ավելացման հարցը: Հանձնակատարը նշեց, որ այժմ հայագիտական ֆակուլտետներում սփյուռքից անվճար հիմունքներով ուսանելու հնարավորություն տրվում է 70 ուսանողի, սակայն այս թիվը բավականին քիչ է: Զարեհ Սինանյանը ներկայացրեց նաեւ գրասենյակի ծրագրերը, գործունեության ուղղությունները, հույս հայտնեց, որ վիրահայության հետ կապը լինելու է մշտական եւ ավելի է սերտանալու:

Նինոծմինդա կատարած այցելությամբ ավարտվեց Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի այցելությունը Վրաստան: Զարեհ Սինանյանը, ուղեկիցների հետ Նինոծմինդայից մեկնեց Երեւան:

Այցի նյութերը հանրագումարեց
ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՅՍՕՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԽՈՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԸ

Այսօր՝ փետրվարի 8-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվում է Սուրբ եւ Անմահ Պատարագ ի հիշատակ Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի՝ Մարտիրոսի եւ 14 զինվորների: Թբիլիսիում Պատարագ կմատուցվի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Իսկ նախօրեին՝ փետրվարի 7-ին, Սուրբ Էջմիածին եկեղեցուց ուխտավորները շարժվեցին դեպի Խարփուխ թաղամասում գտնվող «Սուրբ Սարգիս» մատուռ: Ավանդական մոմավառությունից եւ աղոթքից հետո, ուխտավորների թափորն իր երթն ավարտեց Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, որտեղ բաժանվեցին տոնի խորհրդանիշ աղաբլիթները:

Սուրբ Սարգիս զորավարն ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Նա Հայաստանին սահմանակից Կապադովկիայի իշխանն էր եւ սպարապետը, ով նաեւ հիանալի քարոզիչ էր: Իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում էր հեթանոսական մեհյանները, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սբ. Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ: Շապուհը սիրով ընդունում է Սբ. Սարգսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարն անմիջապես մերժում է եւ կործանում բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Սբ. Սարգսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Սբ. Մարտիրոսը: Սբ. Սարգիսը բանտարկվում է եւ աներեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Սբ. Սարգսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սբ. Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում: Հետագայում Սբ. Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությամբ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ

Փետրվարի 4-ին, նախագահական նստավայրում, կայացավ Հայաստանի Նախագահ Արմեն Սարգսյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային հանդիպումը:

Կարեւորելով արդեն ավանդական դարձած, պարբերական բնույթ կրող հանդիպումները՝ Արմեն Սարգսյանը եւ Նիկոլ Փաշինյանը քննարկեցին երկրի ընթացիկ օրակարգին վերաբերող հարցեր:

Հանդիպման մեկնարկին Արմեն Սարգսյանը նշեց, որ արդեն պարբերական բնույթ կրող նման հանդիպումները թույլ են տալիս քննարկել երկրում, եւ՛ երկրից դուրս՝ միջազգային ոլորտում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները, նաեւ կիսվել յուրաքանչյուր ինստիտուտի՝ կառավարության եւ նախագահական ինստիտուտների այցելությունների, հանդիպումների, ձեռքբերումների, դժվարությունների մասին:

Իր հերթին, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ողջունելով նման հանդիպումների անցկացումը, նշեց, որ հանդիպումն առաջինն է 2020 թվականին: Վարչապետն անդրադարձավ 2019 թվականին կատարած աշխատանքներին՝ նշելով, որ այն հաջող տարի էր Հայաստանի համար:

- Հրապարակվել են 2019 թվականի տնտեսական ակտիվության ցուցանիշները, եւ կարող եմ արձանագրել, որ 2019-ին ունեցել ենք տնտեսական ակտիվության ցուցանիշի առավելագույն թիվը՝ այդ մեթոդով տնտեսական հաշվարկների մեկնարկից ի վեր. մեկնարկը եղել է 2011 թվականին,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ 2020 թվականին երկիրը թեւակոխում է այնպիսի փուլ, երբ առաջնային պլան է մղվում ինստիտուտների կայացումը, հակակշիռների եւ փոխզսպումների համակարգի ներդրումը, ինչը գտնվում է մշտական ուշադրության կենտրոնում:

Հանդիպմանը կողմերն ընդգծեցին երկրի առջեւ ծառացած հրատապ հարցերի քննարկման պատրաստակամությունը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՌՈՒՊՑԻՈՆԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ Է ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ»

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ

«Յուրաքանչյուր կոռուպցիոներ կանգնելու է դատարանի առջեւ»,- Ֆեյսբուք սոցիալական ցանցի իր էջում գրել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանի ձերբակալությանը:

- Այսօր տեղի ունեցավ Երրորդ հանրապետության ամենաբարձրաստիճան (խոսքը գործող պաշտոնյայի մասին է) ձերբակալությունը,- ***գրում է Փաշինյանը:*** *- Մենք չենք կատակում, երբ ասում ենք կոռուպցիան տեղ չունի մեր երկրում: Մեզ համար չկան նախկին կամ ներկա կոռուպցիոներներ: Ներկա թե նախկին յուրաքանչյուր կոռուպցիոներ կանգնելու է դատարանի առջեւ:*

Նշենք, որ փետրվարի 5-ին ԱԱԾ-ն հայտարարել էր, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը ձերբակալվել է առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու կասկածանքով:

Ազգային անվտանգության ծառայությունը ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում ստացել է փաստական տվյալներ այն մասին, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը, հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով եւ անձնական շահագրգռվածությունից ելնելով, շինարարական աշխատանքներ ծավալող անձանց կամ կառուցապատող ընկերությունների ներկայացուցիչների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, ինչպես անձամբ, այնպես էլ՝ մտերիմի միջոցով 5 դեպքով խոշոր եւ առանձնապես խոշոր՝ 1.000.000-2.500.000 ՀՀ դրամի չափով, գումարի կամ ապրանքանյութական արժեքների տեսքով կաշառք ստանալու դիմաց, 2019թ. ընթացքում նրանց օգտին կատարել է գործողություններ կամ նպաստել է ցանկալի որոշումների արագ կայացմանը եւ տրամադրմանը:

ՀԱՆՐԱՔՎԵ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ

Փետրվարի 7-ին Հայաստանի Ազգային ժողովը որոշեց Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի եւ ՄԴ անդամների պաշտոնավարումը դադարեցնելու հարցը դնել համաժողովրդական հանրաքվեի: Սահմանադրական փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին ԱԺ որոշման նախագիծն ընդունվեց՝ 88 կողմ եւ 15 դեմ ձայներով:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը հայտարարեց, որ իրենք չեն մասնակցի քվեարկությանը: «Իմ քայլը» խմբակցությունը հայտարարեց, որ կողմ է քվեարկելու նախագծին:

Նշենք, որ փետրվարի 6-ին կայացած ԱԺ արտահերթ նիստում առաջին ընթերցմամբ՝ 36 դեմ եւ 87 ձեռնպահ ձայներով չընդունվեց Սահմանադրական փոփոխությունների նախագիծը:

Հայաստանի Սահմանադրության փոփոխությունների նախագծով առաջարկվում է 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Սահմանադրության՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, 213-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Մինչեւ Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահի եւ անդամների պաշտոնավարումը դադարում է: Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար Կառավարությունը, Հանրապետության նախագահը եւ դատավորների ընդհանուր ժողովը: Սույն հոդվածի 1-ին մասի հիման վրա մինչեւ Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահի եւ անդամների լիազորությունները համարվում են դադարած, իսկ առաջացած թափուր տեղերը համալրելու ժամկետները եւ այլ մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով նախատեսված կարգով: Նշված կարգը նախատեսող սահմանադրական օրենքի փոփոխություններն ընդունվում են եւ ուժի մեջ են մտնում սույն հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում»,- նշված է նախագծում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՎԱՐՈՒՅԹ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթ է ընդունել Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի եւ մյուսների վերաբերյալ քրեական գործը:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Սերժ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008թ. ապրիլի 9-ից մինչեւ 2018թ. ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում, զբաղեցնելով Հայաստանի նախագահի պաշտոնը, հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2013թ. հունվարի 25-ից մինչեւ նույն թվականի փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածում, կազմակերպել է պաշտոնատար մի խումբ անձանց կողմից պետությունից վատնելու եղանակով առանձնապես խոշոր չափերով գումարի՝ 489, 160, 310 ՀՀ դրամի հափշտակության կատարում:

Դատարանը խոշոր չափերի կաշառք վերցնելու եւ հանձնելու մեղադրանքով վարույթ է ընդունել նաեւ Հայաստանի գյուղատնտեսության նախկին նախարար Սերգո Կարապետյանի, «Ֆլեշ» ՍՊ ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանի, Հայաստանի գյուղատնտեսության նախկին փոխնախարար Սամվել Գալստյանի, Հայաստանի գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության վարչության նախկին պետ Գեւորգ Հարությունյանի վերաբերյալ քրեական գործերը:

ԵՐԵՎԱՆԸ ԿՀՅՈՒՐԸՆԿԱԼԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ Երեւանն ընտրվել է ՎԶԵԲ 2021 թվականի տարեկան ժողովի անցկացման վայր:

- Տարեկան ժողովը Բանկի կարեւորագույն միջոցառումն է: Այսինքն, 2021 թվականի գարնանը Հայաստանը լինելու է ՎԶԵԲ 69 անդամ երկրների, ինչպես նաեւ այլ հյուրերի ուշադրության կենտրոնում: Սա կարեւոր ֆեռքբերում է, եւ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ոլորտներում Հայաստանի գրանցած առաջընթացին տրված արժանի գնահատական:

Եվ հենց այս պահից սկսում ենք աշխատել միջոցառումը ամենաբարձր մակարդակով անցկացնելու համար,- նշեց Տիգրան Ավինյանը:

«ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՄՈՒՐՋ» ԳԼՈԲԱԼ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընթացիկ տարվա մայիսին Հայաստանում կանցկացվի «Մեծ գործարար կամուրջ» խորագիրը կրող գլոբալ համաժողով, որի նախաձեռնողներն են Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը, Կառավարման խորհրդատվական ինստիտուտների միջազգային խորհրդի (ICMCI – International Council of Management Consulting Institutes) հայաստանյան անդամ կառույց՝ Կառավարման խորհրդատվության Հայաստանի ինստիտուտը (IMC Armenia): Համաժողովի անցկացումը Հայաստանում նպատակ ունի խթանելու հայաստանյան խորհրդատվական ծառայությունների շուկան՝ հնարավորություն ընձեռելով խորհրդատվական դաշտի եւ գործարար միջավայրի ներակայուցիչներին առավել մանրամասն ծանոթանալու փոխգործակցության հնարավորություններին, միջազգային փորձին ու զարգացումներին:

Նշենք, որ ICMCI-ի անդամ երկրներն են Ավստրիան, Ավստրալիան, Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան, Կորեան, Նիդերլանդները, Ռուսաստանը, ԱՄՆ, Չինաստանը, Շվեդիան, Շվեյցարիան, այլ երկրներ:

ՅՈՐԵՆԸ, ԳԱՐԻՆ, ԽՆՁՈՐՆ ՈՒ ԴԵՂՁԸ ԿԱՊԱՍՀՎԱԳՐՎԵՆ

Ապահովագրական ընկերությունները շուտով կսկսեն գյուղատնտեսության ոլորտում եւս երեք մշակաբույսի ապահովագրական փաթեթի վաճառքի գործընթացը: Դրանք են հացահատիկային մշակաբույս՝ ցորեն եւ գարի, ինչպես նաեւ խնձոր ու դեղձ:

Նշված մշակաբույսերի ապահովագրական փաթեթը մի շարք հնարավորություններ է տալիս: Մասնավորապես, ապահովագրության փաստացի գումարի 50 տոկոսի չափով տալիս է պետությունը: Վնասի դեպքում ապահովագրական ընկերությունը, օրինակ, ցրտահարման պարագայում փոխհատուցում է 60 տոկոսի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հայաստան 2019 թվականին այցելել է 1 միլիոն 894 հազար 377 զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 242 հազար 595-ով կամ 14.7տոկոսով, իսկ 2017-ի համեմատ՝ 399 հազար 598-ով կամ 26.7 տոկոսով:

Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության կողմից փետրվարի 4-ին հրապարակված բարոմետրի համաձայն՝ Հայաստանը 2019-ին զբոսաշրջության ոլորտում ամենաարագ զարգացող ուղղությունների շարքում զբաղեցրել է 12-րդ տեղն աշխարհում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑ

ՓԵՏՐՎԱՐ

10.02.2020 Սուրբ Ստոմյանց հիշատակության օր

11.02.2020 Սուրբ Սուքիասյանց վկաների հիշատակության օր

13.02.2020 Սուրբ Ոսկյանց քահանաների հիշատակության օր

14.02.2020 Տեառնընդառաջ: Տոն քառասնօրյա Գալստեանն Քրիստոսի ի տաճարն

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին Տեառնընդառաջը կամ 40-օրական Հիսուսի ընծայումը տաճարին տոնում է Աստվածահայտնությունից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին: Եկեղեցու կանթեղներից վերցված կրակով վառվում են խարույկներ՝ իբրեւ Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, Տեառնընդառաջի պատարագից հետո, Հայոց եկեղեցիներում տեղի է ունենում Նորապսակների օրհնության կարգ: Տեառնընդառաջի տոնին Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ:

15.02.2020 Տոն՝ Սուրբ Իսահակ Պարթեւ Հայրապետի

ԵՂԱՆԱԿ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ, ՁՅՈՒՆ

Փետրվարի 7-ից Վրաստանում եղանակը կվատթարանա: Շրջակա միջավայրի ազգային գործակալության տեղեկությամբ, Վրաստանի տարածքում սպասվում է անձրեւ, լեռնային գոտիներում՝ ձյուն, որոշ տեղերում՝ մառախուղ, ձնաբուք եւ քամի: Ծովում հնարավոր է ամպրոպ, կարկուտ եւ 4-5 բալ փոթորիկ, փետրվարի 8-ից 10-ը սպասվում է օդի ջերմաստիճանի կտրուկ նվազում, տեղումներ, հիմնականում ձյան տեսքով:

Ավտոճանապարհների առանձին հատվածներում առատ ձյան պատճառով կդիտվի տեսանելիության վատթարացում, ձնաբքի, մերկասառույցի եւ ձնահյուսի վտանգի պատճառով կսահմանափակվի տրանսպորտի երթեւեկությունը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼՎԱԾ Է

Բարդ օդերեւութաբանական պայմանների, ուժգին քամու եւ սահմանափակ տեսանելիության պատճառով միջազգային նշանակության Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս (Ռուսաստանի Դաշնության սահման) ավտոճանապարհի Գուդաուրի (Փոստա)-Կոբի հատվածում արգելվել է բոլոր տիպի ավտոտրանսպորտի երթեւեկությունը:

Տեղեկությունը տարածում է Վրաստանի Ավտոճանապարհային վարչությունը:

Գերատեսչության տեղեկությամբ, ճանապարհի մնացած հատվածներում երթեւեկությունն ազատ է:

ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԸ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ...

Շարունակում ենք Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նոր, ժամանակակից շենքի շինարարության ընթացքը վավերացնող լուսանկարների հրապարակումը: Մոտ երկամսյա ընդմիջումից հետո, ձեր ուշադրությանն ենք ներկայացնում փետրվարի 7-ին արված լուսանկարը: Ինչպես տեսնում եք, նոր լուսանկարում շենքի ճակատային մասը գրեթե ավարտված է:

Հիշեցնենք, որ մեր թատրոնի նոր շենքի շինարարությունն իրականացվում է Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի տրամադրած շուրջ 19 միլիոն լարիի ֆինանսավորմամբ:

Ծրագրված է թատրոնի շենքի շինարարությունն ավարտել 2020 թվականին:

Լուսանկարը՝ ԳԱՐՐԻ ՄԱՆՈՅԱՆԻ

ՍՊՈՐՏ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հռոմում ընթացող ծանրամարտի աշխարհի գավաթի խաղարկությունում, Վրաստանի ազգային հավաքականի անդամ՝ Անտոն Պլեսնոյը (96 կգ քաշային կարգ) առաջին ոսկե մեդալները գրանցեց երկրի հավաքականի ակտիվում: Նա ուժեղագույն կոչումը նվաճեց պոկման (176կգ), հրման (210կգ) եւ երկամարտի մրցաշարերում, նվաճելով երեք ոսկե մեդալ:

Ծանրամարտի աշխարհի գավաթի խաղարկությանը երեք ոսկե մեդալ նվաճեց նաեւ Լաշա Տալախաձեն (+109 քաշային կարգ):

Ծանրամարտիկը պոկում վարժությունում հաղթահարեց 215 կգ, հրում վարժությունում՝ 255 կգ եւ երկամարտում՝ 470 կիլոգրամով դարձավ չեմպիոն:

Նշենք, որ Հռոմում, ծանրամարտի աշխարհի գավաթի խաղարկությամբ խաղարկվեցին նաեւ Տոկիոյի Օլիմպիական խաղերի ուղեգրերը:

«ԱՆԹԻՄՈՍ ԻՎԵՐԻԱՑՈՒ» ԳԱՎԱԹԸ ՄՆԱՑ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Ռեգբիի Վրաստանի հավաքականը, եվրոպական առաջնության մեկնարկում, «Դինամո արենա» մարզադաշտում հանդիպում անցկացրեց Ռումինիայի հավաքականի հետ: Դա թիմերի 24-րդ հանդիպումն էր, որից 14-ը շահել են վրաց ռեգբիստները: Այս հանդիպումն էլ ավարտվեց վրաց մարզիկների հաղթանակով՝ 41:13 հաշվով: Այսպիսով, այդ երկու թիմերի միջեւ 2002 թվականից խաղարկվող «Անթիմոս Իվերիացու» գավաթը մնաց Վրաստանի հավաքականին:

Ինչ վերաբերում է եվրոպական առաջնությանը, ապա փետրվարի 9-ին Վրաստանի հավաքականը Մադրիդում ուժերը կչափի Իսպանիայի հավաքականի հետ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖՈՒՏՍԱԼԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՆՎԱՃԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՈՒՂԵԳԻՐ

Վրաստանի Ֆուտսալի հավաքականը, «Եվրո-2022» որակավորման փուլի նախնական խմբային մրցաշարում, պարտության մատնելով Գերմանիայի, Ավստրիայի եւ Կոսովոյի հավաքականներին, գրավեց առաջին տեղը եւ նվաճեց հաջորդ փուլի ուղեգիրը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Լիսաբոնի օդանավակայանը: 9.Էվկալիպտ: 10.Հաշվիչ տախտակ Հին Հունաստանում եւ Հռոմում: 11.Ամերիկյան դերասան, ռեժիսոր Սիլվեսթր ...: 13.Էություն, նշանակություն: 16.Հրեական ավտոմատ: 17.Քաղաք Իսպանիայում: 19.Առողջարան Հայաստանում: 22.Կաթնամթերք: 24.Ջարդարանք չունեցող: 25.Փափուկ հենարան գլխի տակ դնելու համար: 27.Նահանգ ԱՄՆ-ում: 29.Լալկան: 32....-մինիստր: 33.Հայ նկարչուհի ... Կալենց: 35.Ծովախեցգետին: 37.Աչք: 39.Ռումինա-հրեական ծագում ունեցող շվեյցարացի դաշնակահարուհի ... Հասկիլ: 40.Պնդուկ: 43.Ումպ: 44.Գետ Ռուսաստանում: 47.Կուսակցություն Հայաստանում: 49.Տրորելով մանրել, փոշիացնել: 50.Վառ՝ պայծառ լույս, ճաճանչ, շող: 53.Վայրի սոխ: 54.Եվրոպայի ամենամեծ լեռնային բարձրադիր լիճը (Ֆրանսիա): 55.Վրացի երգչուհի, մոդել, ով ներկայացրել է Վրաստանը «Եվրատեսիլ-2015» երգի մրցույթում՝ ... Սուբլատի: 57.Ճակատի կնճիռ: 58.Սնգուրել, երեսը ներկել:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անթույն օձ: 2.Հակակրելի, զզվելի: 3.Անաղ, անհամ: 4.Կշռի հին չափ: 5.Վրացի երգչուհի ... Ծուրծումիա: 6.... ու կաց: 8.Ադիս-...: 12.Ոտքի վերին մասը կոնքից մինչեւ ծունկը: 14.Վարչական միավոր: 15.Հարմարանք՝ մազերը սանրելու համար: 18.Աչքածակ: 19.Համ չունեցող: 20.Արյունատար անոթ: 21.Գետ Մեծ Բրիտանիայում: 23.Ազգ Հյուսիսային Կովկասում: 26.Ժամանակի միավոր: 28.Վերք (ժող.): 29.Հայ պատմաբան: 30.Կրկնվող պրոցես: 31.Ստեղծում: 34.Կնքել: 36.Բայկալ-Ամուրյան մայրուղի: 38.Խելագար (ժող.): 41.Տիկնոջ վերնազգեստ: 42.Շատ գեր, հաստլիկ: 45.Հափշտակել, բռնագրավել: 46.Ասելու՝ խոսելու ունակությամբ օժտված: 48.Լվացքի փոշի: 51.«... արքա» (Վ.Շեքսպիր): 52.Տավար, ապրանք (ժող.): 56.Պ.Դուրյանի երկերից:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ադամս: 4.Խելագար: 8.Առու: 9.Աննամուս: 10.Սալբի: 13.Տատմեր: 14.Թե: 15.Ալմա: 17.Որ: 18.Որս: 19.Փարվանա: 21.Ախտ: 23.Վարդան: 24.Իա: 25.Սպի: 27.Սոխ: 28.Անա: 29.Թուր: 31.Ան: 32.Մկո: 33.Արի: 34.Նարե: 35.Նա: 37.Լիա: 38.Արա: 39.Լու: 40.Ձի: 42.Գրավիչ: 44.Լայզա: 46.Գոշ: 48.Տուֆակերտ: 49.Բաբիկ: 50.Իորի: 51.Քնար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Դինամո: 3.Մումու: 4.Խուստուփ: 5.Լելե: 6.Ռոպե: 7.Ջավահիր: 8.Աստրախան: 12.Բրավո: 14.Թանապուր: 16.Արցախ: 20.Արիզոնա: 21.Ադանա: 22.Տնամերձ: 23.Վոկալ: 25.Սթափ: 26.Իրիկուն: 30.Վարագա: 31.Անահիտ: 36.Արտաշես: 41.Ազատան: 43.Արաբո: 44.Լոկ: 45.Մուրո: 46.Գարի: 47.Օթար:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445